

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) հայտարարում է Կոմիտեում քաղաքացիական ծառայության հետևյալ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

1. Ճարտարապետության և քաղաքաշինության վարչության քաղաքաշինության և տարածական պլանավորման բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 46-2.3-4)

2. Ճարտարապետության և քաղաքաշինության վարչության քաղաքաշինության և տարածական պլանավորման բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 46-2.3-49)

Հիմնական գործառույթները՝

1) մշակում է քաղաքաշինության, տարածական պլանավորման և զարգացման բնագավառի օրենքներ և այլ իրավական ակտերի նախագծեր.

2) իրականացնում է հանրապետությունում քաղաքաշինական իրադրության և զարգացման միտումների հետազոտման և վերլուծության աշխատանքներ, մշակում քաղաքաշինության բնագավառում հանրապետության սոցիալ-տնտեսական և տարածական զարգացման, նպատակային ու հատուկ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր ու հայեցակարգեր.

3) մշակում է ազգային և տարածաշրջանային (միկրոտարածաշրջանային) մակարդակների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, իրականացնում է նշված փաստաթղթերի դրույթների և առկա իրավիճակի մոնիթորինգը.

4) սահմանված կարգով իրականացնում է համայնքների տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման և դրանցում փոփոխություններ կատարելու գործընթացի համակարգման աշխատանքները.

5) տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման մեթոդաբանության կատարելագործման վերաբերյալ ներկայացնում է համապատասխան առաջարկություններ Բաժնի պետի հանձնարարությամբ աջակցում է տեղական ինքնակառավարման մարմիններին համայնքների գլխավոր հատակագծերի, գոտևորման նախագծերի և զարգացման ծրագրերի մշակման հարցերում.

6) մշակում է քաղաքաշինական և բնական լանդշաֆտների ներդաշնակեցման ծրագրեր, տարածական պլանավորման նորմեր ու կանոններ, տարբեր գործառնական տարածքների քաղաքաշինական և լանդշաֆտային չափորոշիչներ.

7) մշակում է բնակավայրերի կայուն զարգացման ծրագրեր.

8) ըստ անհրաժեշտության մշակում է հանրապետության և առանձին վարչատարածքային միավորների կամ դրանց խմբերի համար լանդշաֆտային, առողջարանային, ռեկրեացիոն, գործառնական այլ համակարգերի տարածքային կազմակերպման, ինչպես նաև արտադրական կարողությունների, ինժեներական, տրանսպորտային, կոմունալ և սոցիալական ենթակառուցվածքների տեղաբաշխման, պատմամշակութային ու բնության հատուկ պահպանվող տարածքներ ներառող տարածական պլանավորման փաստաթղթերը.

9) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է այլ պետությունների և տարբեր միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության աշխատանքներին, մասնակցում է Միացյալ Ազգերի Կազմակերպության կայուն զարգացման Նոր Օրակարգի և դրանով սահմանված նպատակների, ՄԱԿ-ի Հաբիթաթի Նոր քաղաքային օրակարգի իրագործմանը, Համաշխարհային բանկի Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման, ինչպես նաև քաղաքաշինության ոլորտին առնչվող այլ ծրագրերին, մասնակցում է Հայաստանի Հանրապետությունում Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի իրագործմանն ուղղված միջոցառումների համակարգման աշխատանքներին.

10) մշակում է քաղաքների էկոլոգիական վիճակի բարելավմանը, շրջակա միջավայրի վրա ուրբանիզացիայի բացասական հետևանքների նվազեցմանը, կլիմայի փոփոխության հարմարվողականության բարձրացմանը ուղղված ծրագրեր.

11) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների հեռանկարային ծրագրերի կազմման աշխատանքներին, ինժեներատրանսպորտային ուղեգծերի ընտրությանը, օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնում է եզրակացություն դրանց կառուցվածքների և սպասարկման օբյեկտների տեղադրման վերաբերյալ.

12) Բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման գործընթացը.

13) օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով նախապատրաստում է համապատասխան եզրակացություն՝ քաղաքաշինական նպատակներով հողօգտագործման առաջարկների վերաբերյալ.

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար նաև պահանջվում է՝

- ունի շինարարություն և ճարտարապետություն մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ, կամ առնվազն երեք տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ:

- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

- անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1-2):

• ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու ժամկետը սահմանվում է մինչև նշված թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

• Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ **24.09.2018թ.**

• Աշխատավարձի չափը՝ **212 309 (երկու հարյուր տասներկու հազար երեք հարյուր ինը) ՀՀ դրամ:**

• Աշխատանքի վայրը՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

• դիմում Կոմիտեի գլխավոր քարտուղարի անունով (դիմումի ձևը կցվում է),

• տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի /ների/, վկայականի /ների/, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ համապատասխան մարմնից/ներից) պատճենները բնօրինակների հետ միասին,

• արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

• մեկ լուսանկար 3X4 սմ չափսի,

• անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ կամ էլեկտրոնային փոստի միջոցով k.grigoryan@minurban.am հասցեով: Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.30-ից մինչև 12.30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: Հարցերի դեպքում քաղաքացիները կարող են զանգահարել 011 621 735, 011 621 768 հեռախոսահամարներով:

